ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2009թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. 2009թ. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գործունեության կարևորագույն արդյունքներից կարելի է առանձնացնել հետևյալը.

ա) Հրատարակվել է կենտրոնի «Գիտական աշխատություններ» ամենամյա ժողովածուի 12-րդ հատորը՝ 12 հրատ մամուլ ծավալով և ժողովածուի I-X հատորների մատենագրությունը (3 հրատ մամուլ ծավալով):

բ) Հիմնադրվել է կենտրոնի «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշարը, որի առաջին հատորը (13 հրատ մամուլ) պատրաստ է տպագրության:

գ) 2009թ. պեղումներով ամբողջական տեսք է ստացել Մեծ Սեպասարի հնավայրում հայտնաբերված վաղբրոնզիդարյան տաճարական համալիրը, հստակեցվել են տարբեր ժամանակաշրջաններում հնավայրում կատարված վերակառուցումների բնույթի և նյութի թվագրման հետ կապված հարցերը: Կնքվել է եռակողմ պայմանագիր ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, Շիրակի երկրագիտական թանգարանի և Ժ.Պ. Մահեի ֆրանսիական հնագիտական արշավախմբի միջև 2010-2013թթ. գիտական համագործակցության մասին:

դ) Ավարտվել է Ալեքսանդրապոլի գավառի XIX դարի երկրորդ կեսի էթնոժողովրդագրական դրության վերաբերյալ արխիվային-վիճակագրական տվյալների հավաքումը և դասակարգումը «Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը» արխիվային փաստաթղթերի ժողովածուի 2-րդ հատորի տպագրության համար:

ե) Պատրաստվել և հանձնվել են հրատարակության հետևյալ մենագրությունները

- «Շիրակի հոգևոր և նյութական մշակույթը ըստ մ.թ.ա. I-մ.թ. IV-Vդդ. դամբարանային նյութերի (14 հրատ.մամուլ, ավ. գիտաշատող Լ. Եգանյան),
- «Գյումրին երազում և արթմնի» (12 հրատ.մամուլ, ավ. գիտաշատող Կ. Սահակյան)
- «Սիրո երգիչը. աշուղ Իգիթ» (8 հրատ.մամուլ, գիտաշատող Հ. Ափինյան)
- V - XVդդ հայ պատմագրությունը երաժշտական միջնադարագիտության համատեքստում (16 հրատ.մամուլ, ավ. գիտաշատող Հ. Հարությունյան)

2. 2009թ. ՇՀՀ կենտրոնում ամբողջությամբ իրականացվել է բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» գիտական թեմայի (ղեկ. բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Հայրապետյան) հինգերորդ տարվա համար ծրագրավորված աշխատանքը: Թեմայի կատարման մեջ ներգրավված են կենտրոնի 13 գիտաշխատողներ, և ուսումնասիրությունները տարվել են երեք ուղղություններով՝ Շիրակի պատմագիտություն, հնագիտություն և բանագիտություն:

- Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում զգալի աշխատանք է կատարվել Շիրակի հինգ հնագիտական հուշարձաններում՝ Կապս, Անուշավան, Երազգավորս, Մեծ Սեպասար և Հայկաձոր: Կապսում իրականացվեցին ջրամբարի շինարարության ժամանակ բացված կիսավեր դամբարանների հետախուզական պեղումներ: Բացվեց դամբարան՝ զույգ թաղումով, որին ուղեկցող նյութերը թույլ են տալիս թաղումը թվագրել մ.թ.ա. 3-րդ հազարամյակով՝ վաղ բրոնզի դարաշրջանով:

  Հնագիտական մասնակի հետախուզություն իրականացվեց նաև Անուշավան գյուղի վարչական տարածքում խմբի կողմից հայտնաբերված 7-րդ դարի եկեղեցում: Մաքրման և չափագրման աշխատանքներ իրականացվեցին նաև Երազգավորսի միջնադարյան ամրոց-եկեղեցում՝ հայագետ Ժ.Պ. Մահեի ղեկավարած հայ-ֆրանսիական հնագիտական արշավախմբի հետ համատեղ: Մեծ Սեպասարի պեղավայրում իրականացված աշխատանքների արդյունքում ամբողջական տեսք ստացավ վաղբրոնզիդարյան տաճարական համալիրը, հստակեցվեցին տարբեր ժամանակներում այստեղ կատարված վերակառուցումների, մասնավորապես միջնադարյան կառույցների բնույթի և նյութի թվագրման հետ կապված հարցերը, և պարզվեց միջնադարում դրված այդ կառույցների ամբողջական պատկերը: Պեղումները շարունակվեցին նաև Հայկաձորի միջնադարյան քարանձավային բնակավայրում: Պեղված բոլոր հուշարձանների գտածոները ներկայումս գտնվում են կամերալ մշակման փուլում: Պեղված հուշարձանները չափագրվել են, հնարավորինս կատարվել են կոնսերվացման աշխատանքներ: Հնագետների խումբը հաշվետու տարում հրապարակել է երկու գիտական զեկուցումներ և հանձնել է տպագրության մեկ մենագրություն:

- Հաշվետու 2009թ. կենտրոնում շարունակվել է Շիրակի հնագույն շրջանի պատմության, մասնավորապես մ.թ.ա. առաջին հազարամյակում Ախուրյանի ավազանի ցեղային երկրների տեղադրության, նրանց քաղաքական պատմության, բնակչության հոգևոր, մշակութային և էթնիկ զարգացումների վերաբերյալ ուսումնասիրությունը, որը որոշակի խմբագրական աշխատանքից հետո հաջորդ տարվա վերջին ամբողջական տեսք կունենա և պատրաստ կլինի հրատարակման (12 հրատ. մամուլ): Խումբը մասնակցել է Վանաձորում կազմակերպված հանրապետական նստաշրջանին և հանդես եկել թեմային վերաբերող երկու գիտական հաղորդումներով: Տարվա ընթացքում կատարված աշխատանքն ամփոփված է հրատարակված 6 և տպագրության հանձնված 5 աշխատություններում:

- Բազային ֆինանսավորմամբ ՇՀՀ կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում շարունակվել են տարածաշրջանի մի շարք գյուղերում (Փանիկ, Անուշավան, Սպանդարյան) բանահավաքչական աշխատանքները, բանահյուսական փոքր ժանրի նոր նմուշների (աղոթք, օրհնանք, անեծք, մաղթանք, երդում և այլն) գրառման ուղղությամբ: Հստակեցվել է այդ նմուշների ժանրային համակարգը: Կատարվել է գրառված բանահյուսական նմուշների լեզվաոճական քննություն, այդ նմուշների տարբերակների համեմատական ուսումնասիրություն, ինչպես նաև հավաքված նյութերի համակարգչային դասակարգում և տեխնիկական խմբագրում: Մեծ ծավալի աշխատանք է կատարվել 500-ից ավելի ժողովրդական խաղիկների, մանիների, կլոր պարի երգերի այբբենական դասակարգման ուղղությամբ: Կազմվել են 20 բանասացների անվանական, սեռատարիքային, աշխարհագրական և ժամանակագրական ուղեցույցներ: Սկիզբ է դրվել աղետից հետո վերակազմավորված ընտանիքի սոցիալ-հոգեբանական մոդելի ստեղծման հիմնախնդրի ուսումնասիրությանը: Վերջինիս մասին խումբը գիտական հաղորդումներով հանդես է եկել երկու հանրապետական գիտաժողովներում: Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակման է հանձնվել մեկ մենագրություն, տպագրվել են երկու հոդվածներ, պատրաստվել են հրատարակման ևս երկուսը:

3. ՇՀՀ կենտրոնում 2009թ. իրականացվել են երեք գիտական թեմաներ թեմատիկ ֆինանսավորմամբ: Դրանցից առաջինը «Գյումրի-Ալեքսանդրապոլ- Լենինականի առաջնային արտադրության և կենսապահովման մշակույթները» թեման է (ղեկ.՝ պ.գ.թ. Կ. Բազեյան): Աշխատանքները ծավալվել են ինչպես գիտահետազոտական, այնպես էլ գիտահավաքչական ուղղություններով: Շարունակվել է արխիվային նյութերի հավաքումը ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Հայաստանի ազգային արխիվի Գյումրու և Արթիկի մասնաճյուղերի ֆոնդերում, կազմակերպվել են մի քանի գիտարշավներ մարզի տարածքում: Խմբի ուժերով հրատարակվել է ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»-ի I-X հատորների մատենագրությունը, պատրաստվել են «Կանանց ձեռարվեստը», «Զուլիակություն», «Զինագործություն», «Երկաթագործական արհեստները» և «Ոսկերչություն ու արծաթագործություն» թեմաները ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում հրատարակվող «Հայերը» (ռուսերեն) մեծածավալ ազգագրական ուսումնասիրության համար: Խումբը հաղորդումներով մասնակցել է մի քանի գիտական նստաշրջանների՝ Արցախի համալսարանի կազմակերպած գիտաժողովին, Երևանում անցկացված «Հնօրյա զրույցներ և հրաշապատում հեքիաթի արդի մեկնաբանություններ» հանրապետական գիտաժողովին, Թբիլիսիում տեղի ունեցած «Археология, этнология, фольклористика Кавказа» գիտական նստաշրջանին և այլն: Խումբը հաշվետու տարում հեղինակել է նաև «Հայաստանի ազգային ատլաս»-ի 2-րդ հատորում տեղ գտած «Ասեղնագործություն և ժանեկագործություն» թեման: Հրատարակվել են 5 և պատրաստվել են հրատարակման ևս 4 հոդվածներ:

- Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարվող երկրորդ աշխատանքը «Ալեքսանդրապոլի գավառը XIX դ. վերջին քառորդին և XX դարասկզբին» թեման է (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան), որի գծով հաշվետու տարում նախատեսվում էր ավարտին հասցնել Ալեքսանդրապոլի գավառի այդ ժամանակահատվածի ժողովրդագրական դրությանը վերաբերող արխիվային նյութի հավաքման և վերլուծական աշխատանքը, ինչպես նաև իրականացնել Առաջին աշխարհամարտի տարիներին եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ գաղթականության տեղաբաշխման ու ներգաղթից հետո գավառի ժողովրդագրական դրությանը վերաբերող արխիվային նյութի հավաքչական աշխատանքը: Դրանք նախատեսված չափով կատարված են: Զուգահեռ կատարվել է նաև գավառի XIX դարավերջի հասարակական-քաղաքական կյանքի, ինչպես նաև Առաջին աշխարհամարտի տարիներին այստեղ գործող հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեության ուսումնասիրությունը: Հավաքչական աշխատանքները կատարվել են ՀՀ ազգային և ԳԱԱ հիմնարար գրադարաններում, նաև ՀՀ ազգային արխիվի ֆոնդերում: Արխիվային նյութերի համակարգմամբ և վերլուծմամբ սկսվել է «Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը» ժողովածուի 2-րդ հատորի նախապատրաստական աշխատանքը: Շարունակվել է Ալեքսանդրապոլի գավառի մշակույթի, կրթական գործի, սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրությունը: Հաշվետու տարում թեմայի կատարողներից երկուսը ավարտել են թեմային առնչվող թեկնածուական ատենախոսությունները և ներկայացրել պաշտպա-

նության: Թեմայի գծով 2009թ. հրատարակվել են 8 հոդվածներ և հանձնվել է հրատարակման ևս 4-ը:

- Թեմատիկ ֆինանսավորմամբ երրորդ աշխատանքը «Շիրակի բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտությունը պատմաքննական լույսի տակ» թեման է (ղեկ.՝ արվ. գ.թ. Հ. Հարությունյան), որի կատարող խումբը աղբյուրագիտական նյութեր է հավաքել Ջիվանու, Շերամի, Ա. Բրուտյանի, Վ. Տալյանի, Ա. Քոչարյանի և Պ. Բաբայանի անձնական ֆոնդերում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժող. ստեղծագործության բաժնում, և այդ նյութերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում XIX դարավերջին Ալեքսանդրապոլում հայ աշուղական երգարվեստի նոր ավանդույթների ձևավորման մասին: Այդ նյութերով խումբը սկսում է «Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցը» աշխատության նախապատրաստական աշխատանքները: Հավաքվել են աշուղական երգերի նոր ձայնագրություններ մարզի Մեծ Սեպասար և Կրասար գյուղերում: Կազմվել են 80-ական թթ. Լենինականում աշուղ Շահենի կազմակերպած աշուղական դպրոցի ներկայացուցիչների՝ Համիկի, Կոշտոյի և Արամայիսի երգարանները (ընդհանուր առմամբ 100 երգ և բանաստեղծություն: Համակարգչային նոտագրման են ենթարկվել շուրջ 210 երգային նմուշներ: Խումբը 2009թ. տպագրության է հանձնել «Սիրո երգիչը. աշուղ Իգիթ» (8 հրատ. մամուլ), «V-XVդդ. հայ պատմագրությունը երաժշտական միջնադարագիտության համատեքստում» (16 հրատ. մամուլ) աշխատանքները, հաղորդումներով հանդես է եկել 2 միջազգային գիտաժողովներում, տպագրել է 3 հոդվածներ, հանձնել տպագրության ևս 2-ը:

4. ---

5. 2009թ. հրապարակումների ցանկը.

Մենագրություն

1. Ափինյան Հ., Սիրո երգիչը. աշուղ Իգիթ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2009, 8 հրատ. մամուլ (հանձնված է հրատ.):
2. Եգանյան Լ., Շիրակի հոգևոր և նյութական մշակույթը ըստ մ.թ.ա. I-մ.թ. IV-Vդդ. դամբարանային նյութերի,Եր.,ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2009, 14 հրատ.մամուլ (հանձնված է հրատ.):
3. Հարությունյան Հ., V - XVդդ հայ պատմագրությունը երաժշտական միջնադարագիտության համատեքստում, Գյումրի, «Էլդորադո» հրատ., 2009, 16 հրատ.մամուլ (հանձնված է հրատ.):
4. Սահակյան Կ., Գյումրին երազում և արթմնի, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 2009, 12 հրատ.մամուլ (հանձնված է հրատ.):

Հոդված

5. Աթանեսյան Լ., Գյումրեցի նկարիչ Ալ. Գրիգորյանի գրքային ձևավորումները/ ԳՊՄԻ 75-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 42-48:
6. Աթանեսյան Լ., Գույնի և բառի համերաշխությունը/«Հնօրյա զրույցներ և հրաշապատում հեքիաթի արդի մեկնություններ հանրապետական» գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 51-53:
7. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի Հեղկոմի գործունեությունը 1920-1921թթ. փաստաթղթերի հավաքածու, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2, Երևան, 2009:
8. Ալեքսանյան Կ., Գաղթականական դպրոցներն Ալեքսանդրապոլի գավառում 1915-1917թթ. / ԳՊՄԻ 75 -ամյակին նվիրված հանր. գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 158-164:
9. Ալեքսանյան Կ., Թուրքիայի հակահայ քաղաքականության դրսևորումները (1921թ. ապրիլ-հոկտեմբեր) / ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, 2009, (հանձնված է հրատ.):
10. Ալեքսանյան Կ., Կրթական բարեփոխումներ, առկա հիմնախնդիրներ/ ԳՊՄԻ 75-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 165-169:
11. Ալեքսանյան Կ., Պետրոս Մոճոռյանի հուշերը Գոլիցինին տեռորի ենթարկելու վերաբերյալ/ Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2, Երևան, 2009:
12. Ակոպով Ա., Ժողովրդագրական գործընթացները պատմական Տայքի տարածքում XVI-XVIII դարերում/ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, 2009 (հանձնված է հրատ.):
13. Ակոպով Ա., Պատմական Տայք նահանգն Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական համակարգում XVI-XVIII դարերում/ ԳՊՄԻ 75-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 58-64:

14. Ակոպով Ա., Օլթու գավառի բնակավայրերի տեղագրությունը (XVI-XVIII դարեր) / Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 11, Երևան, 2010:
15. Այվազյան Գ., Ալեքսանդրապոլի մշակութային-բարեգործական ընկերությունները 1860-ական թվականներին/ Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հատոր 11, Երևան, 2010, էջ 9:
16. Բազեյան Կ., Արհեստն ու արհեստավորը հայկական հեքիաթներում/ գիտաժողովի թեզերի ժողովածու, Երևան 2009, էջ 14-15:
17. Բազեյան Կ., Ասեղնագործությունն ու ժանեկագործությունը տավուշցիների կենցաղում 1940-1960-ական թթ./Տավուշ, նյութական և հոգևոր ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր. Իջևան, Երևան, 2009, էջ 18-23:
18. Բազեյան Կ., Հայկական ասեղնագործության և ժանեկագործության կենտրոնները/ Հայաստանի ազգային ատլաս, մաս II, Երևան 2009, էջ 180-181:
19. Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացների կառավարման խնդիրները Շիրակի մարզի քաղաքային բնակավայրերում (20-րդ դարի վերջ-21-րդ դարի սկիզբ)/ ԵՊՀ, Երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսոր Լ. Վալեսյանի 80-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2009:
20. Բոյաջյան Ա., Շիրակի մարզի ուրբանիզացման գործընթացը/ ԳՊՄԻ հիմնադրման 75-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 312-318:
21. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը Արևելյան Հայաստանի XXդ. առաջին քառորդի վարչատարածքային բաժանումների համակարգում/Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 11, Երևան, 2010, էջ 10:
22. Հայրապետյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Գյումրի-Ալեքսանդրապոլում (XIX դար) / Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 10, Երևան, 2009, էջ 145-157:
23. Հայրապետյան Ա., Համաճարակային հիվանդություններն Ալեքսանդրապոլի գավառում/ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Գյումրի, 2009 (հանձնված է հրատ.):
24. Հայրապետյան Ա., Նոր վավերագրեր Ալեքսանդրապոլի գավառի XIXդ. 80-ական թթ. ժողովրդագրական դրության մասին/ ԳԱԱ Շիրակի հայագիտակ հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, հ. 12, Գյումրի, (հանձնված է հրատ.):
25. Հարությունյան Հ., Աշուղ Շերամի հեքիաթները/«Հնօրյա զրույցներ և հրաշապատում հեքիաթի արդի մեկնություններ» ժողովածու, Երևան, 2009 (հանձնված է հրատ.):
26. Հարությունյան Հ., Արաքսի Գյուլզադյան/«Մշակույթ», Երևան, 2009, N3:
27. Հարությունյան Հ., Կոմիտասի ստեղծագործությունները ռուսական երաժշտագիտական մտքի տիրույթում/«Հայ-ռուսական մշակութային կապեր» ժողովածու, Երևան, 2009:
28. Հարությունյան Հ., Պարույր Բաբայանի ստեղծագործությունները/«Արվեստ և ժամանակ», Գյումրի, 2009, N1-2, էջ 18-24:

29. Պետրոսյան Լ., Արշակ անվան Հայաստանում կիրառվելու ժամանակի և ոլորտի մասին/ ԳՊՄԻ հանր. գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, պ. 2, Գյումրի, 2009, էջ 185-190:
30. Պետրոսյան Լ., Սեպագրային Դուրուբանի/հայերեն տորբան/ ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 52-59 :
31. Պետրոսյան Ս., «Արարատյան դրախտը» սեպագրային աղբյուրներում /Պատմաբանասիրական հանդես, թիվ 2, Երևան, 2009:
32. Պետրոսյան Ս., Հարվածային մի քանի նվագարանների անունների շուրջ/Արվեստ և ժամանակ, Հայացք Գյումրուց, թիվ 1-2, Գյումրի, 2009, էջ 41-48:
33. Պետրոսյան Ս., Մի ժայռապատկերի մեհենագրության վերծանման փորձ/ԳՊՄԻ 75-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, «Դպիր» հրատ., Գյումրի, 2009, էջ191-199:
34. Պետրոսյան Ս., Պատմականը Զարմայր նահապետի մասին ավանդազրույցում/ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, պրակ 2, «Դպիր» հրատ., Գյումրի, 2009:
35. Պետրոսյան Ս., Ուրմե և Արխե երկրների տեղորոշման շուրջ/ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 600-68:
36. Սահակյան Կ., Արքետիպը հեքիաթներում և երազներում/«Հնօրյա զրույցներ և հրաշապատում հեքիաթի արդի մեկնություններ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 25:
37. Սահակյան Կ., Նշանասիմվոլային համակարգի դասավանդման առանձնահատկությունները «Էթնիկական հոգեբանություն» առարկայի ուսումնասիրության գործընթացում/ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, նվիրված 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի 20-րդ տարելիցին, պրակ 1, Գյումրի, 2009, էջ 300-304:

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ,
տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան,
գիտքարտուղար՝ արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյան
հեռ.՝ (0312) 5 61 73,
e-mail : hkentron@mail.ru

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ
   ա) -
   բ) -
   գ) **16**

8. **Հայրապետյան Սերգո Արտուշի – ՀՀ Նախագահի Շնորհակալագիր** :

Շ.Հ.Հ կենտրոնի տնօրեն՝ Ս. Հայրապետյան
գիտքարտուղար՝ Հ. Հարությունյան

-- Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2009թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (Xհազ. դր)		
		Բազային	Թեմատիկ	Տնտ. ժայմանագրեր
1	2	3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	1 15.085.700 դր.	3 4.812.000 դր.	

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային գիտական միջոցառումներ

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	2	3	4	5
1	Թումանյանական ընթերցումներ, նվիրված բանաստեղծի 140 ամյակին	Գյումրի, մարտի 20-21, ՇՀՀ կենտրոն, ԳՊՄԻ գրակ. ամբիոն	16	-
2	«Գյումրու երևելիները» սեմինար-համերգ, նվիրված անվանի դուդուկահար Լևոն Մադոյանին	Գյումրի, հունիս 19-20, ՇՀՀ կենտրոն, Կոնսերվատորիայի մասնաճյուղ	10	-
3	Աշուղ Շահեն 100, համերգ-գիտաժողով	Կրասար, սեպտեմբեր 25 ՇՀՀ կենտրոն,	18	-

Աղյուսակ 4

Աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ-անդամ երկրներ, կատարած գործուղումները

N	Կազմակերպությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և խորհրդածությունների համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Վրաստան	2		1

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Ֆրանսիա, Բելգիա		5 2	2

--- Աղյուսակ 6

Աղյուսակ 7

Կազմակերպության 2009թ. ֆինանսավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտառժույթ ($,€, руб.)	արժույթի կուրսկ	դրամ
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	22.284.200				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2009 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրապետ.	Արտա-սահմ.
1	2	3	4	5	6	7	8
	ՇՀՀ կենտրոն	4				35	2

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2008 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն	1			1/1

--- Աղյուսակ 10

Աղյուսակ 11

ՀՀ ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ առ 01.01.2009թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	ԳԱԱ ակադե-միկոսներ /այդ թվում կանայք/	Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/	Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	22/13	17/10		2/0	8/6

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝

բ.գ.դ., պրոֆեսոր Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ